ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ճիշդ է, որ մարդասիրական ձեռնարկները, ինչպէս գեղարուեստը հայոց ժողովուրդների սեփականութիւնն են և ամենքի սրտին մօտ, սակայն ներկայ պարագայում խնդիրը բոլորովին տարբեր է:

Իրանում ապրող հայերը մարդասիրական զգացումներից չէ, որ օգնել են ու օգնում են Մայր Հայրենիքի այս կամ այն կարիքին, այլ իրենց սրբազան պարտականութիւնն են կատարում ամեն անգամ որ բարեպատեհ առիթն է ներկայանում՝ դոյզն աջակցութիւն բերել իրենց այն քաջարի քոյրերին ու եղբայրներին, որոնք թէ կազմակերպման սկզբնական դժուարին շրջաններում, թէ շինարարական հզոր գաժեակների օրերին և թէ Հայրենական պատերազմի դառնաշունչ տարիներում հերոսաբար կանգնեցին Մայր Հայրենիքում իրենց դիրքերի վրայ, մեծ թէ փոքր, երիտասարդ թէ ծեր, այր թէ կին, բոլորն էլ առկացին ամեն դժուարութեան ու զրկանքի, ցոյց տուին անսահման զոհաբերութիւն և իրենց ամենաթանկագին զաւակների ջահել կեանքերով ու կարմիր արեան գնով ջախջախեցին դաժան սև ֆաշիզմի հորդաներին ու համաշխարհային փառաշուք յաղթանակի մէջ փոքր ժողովրդի մեծ բաժին ունեցան:

Իրանահայութիւնը լիովին գիտակցում է այդ և ցանկանում է հնարաւոր սահմաններում ամեն առթիւ բանալ իր սրտի դռները և նրա թելադրանքով ու պարտականութեան գիտակցութեան համակ թափով, գէթ իր համեստ միջոցների անկեղծ մասնակցութիւնը բերել Մայր Հայրենիքի կարիքներին:

Սահմռկեցուցիչ պատերազմը աշխարհի մեծ մասում, ինչպէս և Խորհրդային Հայաստանում անասելի կեանքեր խաւարեց ու թշուառութիւն սերմանեց ամենուր, ո՞րքան որդեկորոյս մայրեր, ջահել հասակում այրիացած կանայք, եղբայրազուրկ քոյրեր և մանաւանդ անմեղ փոքրիկ որբուկներ թողեց այս զարգանդեցուցիչ պատերազմը:

Այժմ երբ կանգ է առել Զարիքը Արդարի և Իրաւացիի յաղթանակով մարդկութիւնը կրկնակի եռանդագին թափով պիտի վերաշինէ, վերակառուցէ, սփոփէ, խնամէ բոլոր աւերները:

Առաջին հերթին մեր Մայր Հայրենիքը 12 մանկատներ ունի, որոնց պիտի հոգալ սփիւռքի հայութիւնը գէթ այսպիսով կատարելու իր սրբազնագոյն պարտականութիւնը:

Եւ ի՞նչ բարեպատեհ առիթ, ի՞նչ երջանկութիւն, որ դրանցից մէկը բաժին է ընկնում Իրանահայութեան, իր իսկ գիտակից անհատների դիմումով և յանձնառութեամբ:

Ոչ մի կասկած, որ այնուհետև մինչև ամենաչնչաւորը իրենց տուրքը կը բերեն այս մանկատան յաջողութեան և հաստատութեան համար: Ոչ մի խօսք, որ ցնծագին կողջունի այս գեղեցիկ ձեռնարկը և մի անգամ ևս Իրանահայը կը տայ ապացոյցը իր լաւագոյն զգացումների և գիտակցութեան ու պարտճանաչութեան:

Հ. Գ.